



Դանիել Վարուժան

Կարմիր հողը

Գրասեղանիս վրայ, սա
Սկաւառակին մէջ կայ բուռ մ'հող, բերուած հոն
Հայրենիքի դաշտերէն:
Նուէր է ան. — Չայն ինձ ձօնողը կարծեց
Միրտն իր տրուած, առանց երբեք գիտնալու
Թէ կու տար իր պապերունն ալ միասին:
Չայն կը դիտեմ. — մերթ ժամեր
Բիբերս անոր վրայ յառած կը մնամ
Լո՛ւտ եւ թախծո՛տ, իբր այդ հողին մէջ յուրթի
Նայուածքս արմատ արձակէր: —
Կը մտածեմ. — Գուցէ իր գոյնը բոսոր
Չէ պարզեւուած բնութեան ներհուն օրէնքէն.
Վերքերու սպունգ մըլլալով
Խմած է մաս մը կեանքի, մաս մ'արեւու.
Եւ իբր տարր անպաշտպան
Կարմիր հող մ'է եղած, հայ հող մըլլալուն:
Գուցէ իր մէջ կը բաբախեն տակաւին
Դարերը հին-հին փառքին,
Կայծն անրակուտ սմբակներու որոնց գոռ
Արշաւանքն օր մը ծածկեց
Հայկեան վաշտերն յաղթութեան տար փոշիով:
Կըսեմ. — Իր մէջ դեռ կ'ապրի
Ինքնատիպ ուժն այն որ կագմեց շունչ առ շունչ,

Կեանքս իմ, քու կեանքդ, ու տուաւ,
Կարծես ձեռքով գիտակից,
Նոյն թուխ աչուին նոյն եւ նման հոգիով
Կիրք մ'Եփրատէն առնուած,
Սիրտ մը կամշոտ, թաքստոց
Ընթաստանքի ու նաեւ բո՛ւորն սիրոյ:
Իր մէջ, իր մէջ կը կայծկլտայ հոգի մ'հին՝
Հին դիցազնի եղած փսոյր մը գուցէ՝
Կոյսի մ'աղուոր արցունքով .
Հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն,
Անանիայէն բիբ մը դէտ՝
Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն.
Ա՛զգ մը կայ հոն, սեղանիս վրայ ազգ մը հին,
Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,
Հողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի,
Կոզեզինէ — եւ աստղերու ինչպէս ցանն
Անհունութեան մէջ կապոյտ —
Փոշիներովն իր հրաբորբ
Հոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոզէ:
Ու այն ատեն լարը ջղերուս կը դողայ
Սարսուռով մ'յորդ, ա՛յն սարսուռով՝ որ մտքին
Հերկերուն վրայ աւելի՛
Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ:
Ու կը զգամ անցքն ուղեղէս
Նոր յուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
Խոր վերքերովն իրենց, վրէժի՛ շրթունքներ.
Եւ այդ հողն, այդ փոշին, գոր ես կը պահեմ
Այնքա՛ն սիրով՝ որքան հոգիս պիտո՛ չընէր
Եթէ մարմնոյս աճիւններն
Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գտնար.
Այդ պանդուխտ մասն Հայաստանի, մասունքն այդ
Մնացած մեր յաղթ պապերէն,
Բժժանքն ու ձօնն այդ կարմիր,

Միրտս սեղմած մագիլներով անծանօթ,
Երկինքն ի վեր, գրրքի մը վրայ, թանկագին
Ժամու մը մէջ ժպիտներու, սէրերու,
Կամ քերթուածի մը ծնած վեհ վայրկեանին
Զիս հապըշտապ կը մղէ
Մերթ լալու, մերթ մոնչելու,
Եւ զինելու բռունցքս, հոգիս բռունցքիս մէջ: